

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹՈՒՄ

(ԸՍՏ ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ՆԻԻԹԵՐԻ)¹

ԿԱՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

karenhovhov@mail.ru

ՄՈՒՏՔ

Այլ ժողովուրդների նման հայոց մէջ եւս առկայ են համակարգուած պատկերացումներ աշխարհի կառուցուածքի, տարածութեան եւ ժամանակի մէջ աշխարհակառոյցի (աշխարհի մոդէլի) դիրքի եւ յարաշարժութեան մասին: Աշխարհակառոյցը կազմակերպում եւ պայմանաւորում է իր մէջ գոյութիւն ունեցող մարդկային հանրութիւնը՝ աշխարհի մէջ մարդու յստակ դերով եւ տեղով, դրա հիմքով է հաստատում կարգականոնը, օրէնքը՝ քառը վերափոխելով կոսմոսի: Աշխարհի մոդէլը համընդ-հանուր երեւոյթ է, որն ունի նախաստիպային հիմք: Դրա մասին պատկերացումներն արտայայտում են տարբեր ձեւերով. Բանա-հիստութիւն, ճարտարապետութիւն, կրօն եւ հաւատալիք են.:

Աշխարհի մոդէլին որպէս հայեացքների համակարգ անդրա-դարձել են շատ գիտնականներ. Մ. Էյհադէ², ՈՒ. Եուսեուկով³, ՈՒ. Տոպորով⁴, հայ գիտնականներից՝ Ա. Մնացականեան⁵, Ս. Յարութիւնեան⁶, Հ. Պետրոսեան⁷, Թ. Հայրապետեան⁸, Լ. Սի-մոնեան⁹ եւ այլք: Իւրայայտուկ տեղ է գրաւում Կ. Գ. Եունգի *Փիլի-սոփայական Ծառ*¹⁰ աշխատութիւնը, որտեղ հեղինակը տիեզե-րական ծառը բացայայտում է հոգեբանական տեսակէտից՝ բե-րելով բազմաթիւ առասպելական, փիլիսոփայական, ալքիմիա-կան նիւթեր, ինչպէս եւ հոգեբանական այցելութիւնների ընթաց-քում իր այցելուների ձեռքով արուած բազմաթիւ նկարներ:

Սոյն աշխատասիրութեան համար օգտագործուած բանախիւ-սական նիւթերը վերցուած են հայ ժողովրդական աւանդութիւն-ներից¹¹, հեքիաթներից¹², հանելուկներից¹³, երգերից¹⁴:

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑ. ՀԱՄԱԿԱՐԳ

Ա. Լոսեւը, քննելով Եու. Լոտմանի յօդուածը մոդէլների մասին, անդրադառնում է հեղինակի հետեւեալ պնդմանը. «Մոդէլատորող համակարգը փարբերի կառուցուածքը եւ դրանց միացման կանոններն են, որ գտնուում են ճանաչման, գիտակցման, կարգատրուածութեան առարկայի ամբողջապէս հաստատուած գուգադրութեան իրավիճակում», որը ճիշտ է համարում եւ շարունակում է. «Մոդէլատրել չի նշանակում ցանկացած իրականութեան արտացոլում, այլ յարաբերակցել իրար միջեւ արտացոլման բոլոր փարբերը եւ դարձնել այն յստակ տրամաբանական համակարգ»¹⁵: Այսպիսով աշխարհի մոդէլ ասելով պէտք է հասկանալ տուեալ հանրութեանը բնորոշ տարածա-ժաւայիին եւ ժամանակային-տիեզերական ընկալումները, աշխարհում դիրքորոշուելու մարդու տրամաբանական ուղին: Վ. Տոպորովը տիեզերական ծառին կառուցուածքը վերագրում է, մինչդեռ Լոսեւը ճշտում է մտցնում, որ կառուցուածքը ոչ թէ տիեզերական ծառին է վերաբերում, այլ աշխարհի մոդէլին, որի դրսեւորումներից է տիեզերական ծառը: Լոսեւը այնքոը համարում է արքետիպ եւ աշխարհի մոդէլի համընդհանուր գաղափար¹⁶:

Աշխարհի տարածական մոդէլն արտայայտում է մի շարք գաղափարներով եւ կերպարներով: Տիեզերական սիւն - յայտնի թէ՛ արխայիկ, թէ՛ աւելի զարգացած մշակոյթներում, երկնքի ու երկրի միջեւ կապը, որ մարմնաւորում էր լեռան, պալատի, տաճարի, երբեմն երկնային սիւնի մէջ¹⁷: Տիեզերական ծառը լրացնում, կրկնորդում կամ փոխարինում է տիեզերական լեռանը: Երկուն էլ աշխարհի ուղղահայեաց առանցքի դրսեւորումներն են¹⁸: Երկբաժանութեան նախատիպարի համաձայն, կենաց ծառը կապում է իգական, իսկ տիեզերական ծառ-սիւնը՝ արական սկզբի հետ, որոնք համապատասխանաբար պտղաբերութեան եւ երկինք-երկիր տիեզերակառոյցի, նաեւ միմեանց հետ կապի խորհրդանիշներն են¹⁹: Ըստ Էլիադէի, տիեզերական ծառը մի կողմից խորհրդանշում է տիեզերքը իր յանրժական վերածնութեամբ, հանդիսանալով կենքի անսպառ ակունք, որով դառնում է կենաց ծառ եւ կապում է արարման, պտղաբերութեան, ծօնման հետ, ստանալով բացարձակ իրականութեան եւ անմահութեան գաղափար: Տիեզերական ծառը հարստանում է բազ-

մաթիւ առասպելական երկուորեակներով եւ ձեռք է բերում իգական որակներ՝ անցնելով մեծմօր արքետիպին: Միւս կողմից ներկայացնում է երկինքը, երբեմն՝ Ծիր Կաթինը²⁰:

Ուղղահայեաց աշխարհակառոյց. Տիեզերքը որպէս մոդէլ ձեւաւորում է վերից վար կամ վարից վեր՝ աշխարհի առանցքով: Այսպիսով տիեզերքը բաժանւում է երեք մասի. երկինք, երկիր եւ ստորերկրեայք. այդ մասերը միշտ չէ, որ հաւասար են իրար:

Ըստ Էլիադէի, տիեզերակառոյցի հիմնական ուրուագիծը երեք խոշոր տիեզերական տարածքներն են, որոնցից կարելի է հետեւողականօրէն անցնել. քանի որ դրանք միացուած են առանցքով: Այդ առանցքը անցնում է անցքի միջով, որտեղով աստուածներն իջնում են երկիր, մեռեալները՝ գնում ստորգետնեայ աշխարհ²¹: Ըստ Տոպորովի, տիեզերական ծառը²² մարդկային հանրութիւնների աշխարհի մոդէլի կերպարն է: Եթէ պալէոլիթի արուեստում յարաբերակցութիւնները դեռ յստակ չեն, ապա աւելի զարգացած պատկերագրութեան մէջ դրանք վերափոխւում են եռամաս ուղղահայեաց համակարգի. թռչունները բնորոշում են երկինքը, սմբակաւորները, գազանները կամ մարդիկ՝ միջին, եւ օձերն ու ձկները՝ ստորին աշխարհը²³: Ուղղահայեաց կառուցուածքի գաղափարկերպարներն են տիեզերական ծառը, նրան համագօր լեռը, տաճարը, սիւնը, մարդանման էակը են.²⁴ Ըստ Բ. Ֆրոլովի, Հայաստանին աւելի բնորոշ է ուղղահայեաց մոդէլը²⁵: Ստորին պալէոլիթից Ֆրոլովը դուրս է բերում աշխարհակառոյցի երկու աւանդական պատկերացում, որոնցից ուղղահայեացը ներկայացուած է թռչունների եւ օձերի զարդանախշերով, շարժման կշռոյթը միշտ եռամաս է, մոտիւները աստղային-տիեզերական իմաստաւորմամբ են՝ երկու ոլորտների ընդգծումով. երկինք-թռչուն, երկիր-օձ²⁶: Հայկական լեռնաշխարհում տիեզերական երեք շերտերի նշանագրումը այդ շերտերում ապրող կենդանիներով շարունակւում է բրոնզէ դարում, եւ աւելի ուշ²⁷: Տիեզերական ծառը արքետիպ է, ըստ առասպելական ընկալման այն տիեզերքի եւ տիեզերքի կենտրոնում գտնուող մարդու տարածաժամանակային-մարմնակազմական միասնական մոդէլն է: Այսինքն՝ այդ

ընկալումների համաձայն աշխարհը, ժամանակն ու մարդը դիտում են իբրեւ հաասարագոր իրողութիւններ²⁸:

Հորիզոնական աշխարհականոյց. Տիեզերքը որպէս մոդէլ ձեւաւորում է առանցքի չորս կողմերով, որոնք համապատասխանում են աշխարհի չորս կողմերին եւ հաասար են իրար: Ըստ Ֆրոյդի, հին քարէ դարում այս օրինակը արտայայտում է միայն ցամաքային կաթնասուններով, զարդանախշերում յաւելում են խաչեր, ու շարժման կշռոյթը քառամաս է²⁹: Եզնիկ Կողբացին, խօսելով չորս տարերքների մասին ըստ հիմնական յատկութիւնների³⁰, համադրում է դրանք աշխարհի չորս կողմ անկիւններին. «*Եւ ահա տեսնում ենք այս աշխարհն ինչպէս մի կառք՝ լծուած չորս երիվարներով՝ փաքութեամբ, ցրտութեամբ, չորութեամբ ու խոնաւութեամբ: Եւ կայ կառավարող մի գաղտնի զօրութիւն, որն այդ չորս հակառակորդները հաշտ ու խաղաղ պահելով, ենթարկում է իրեն: Այդ կառքը բոլոր ուղղութիւններով է ընթանում: Երբ դէպի արեւելք է ընթանում, որեւէ արգելք չկայ, որ դէպի արեւմուտք արշալի, եւ երբ դէպի հիւսիս է սլանում, որեւէ արգելք չկայ, որ դէպի հարաւ սուրայ, որովհետեւ կառավարողի ձեռքը ունակ է դէպի ամէն կողմ ուղղելու եւ փրկեցրէ չորս անկիւններն արշաւել փալու»³¹: Կողբացին տիեզերքը ներկայացնում է որպէս տուն, ուր առաստաղը երկինքն է, յատակը՝ երկիրը, դրանց միջեւ վառուղ ճրագը՝ արեգակն է, իսկ տան չորս անկիւնները՝ աշխարհի չորս կողմերն են³²:*

Միասնական աշխարհականոյց. Համաշխարհային կրօններում աշխարհի պատկերացումը սկզբունքօրէն չի տարբերում արիսայիկ կրօնական հաւատալիքներից, տարբեր են միայն մանրամասները: Կարեւորագոյն նորութիւնը յետմահու վարձքի-հատուցման գաղափարն է՝ դրախտի եւ դժոխքի մասին պատկերացումների կերպով³³: Աւելի բարդանալով, երկու աւանդական մոդէլները միանում են, ստացւում է եօթ կէտ, որոշ մշակոյթներում կարող են լինել նաեւ հինգ կամ ինը³⁴: Այդ կէտերը տեղադրւում են աշխարհի առանցքի շուրջ, որը նաեւ յենասիւնն է³⁵: Կենդանիներին՝ թռչուն, ցուլ, այծ, ոչխար, գայլ, օձ, ձուկ, վիշապ եւն., աւելանում են եւ ոլորտների գունային բնորոշումները. սեւ (ստորին), կարմիր (միջին), սպիտակ (վերին), երբեմն՝ կանաչ, դեղին, կապոյտ: Հորիզոնական բաժանումը յաճախ եւս եռամաս է՝ աջ,

կենտրոն եւ ձախ, եւ, ի տարբերութիւն ուղղահայեացի՝ բաց համակարգ է³⁶: Ֆրոյլովը, համադրելով աշխարհա-առոյցի էթնիկ տարբերակները արուեստում, գտնում է, որ ուղ-դահայեացը եւ հորիզոնականը ցոյց են տալիս աշխարհի առան-ձին մասերը, այնպէս որ դրանք պէտք է միանան՝ լրացնեն ի-րար, որպէսզի առաւել ամբողջական ստացուի տիեզերքի կերպարը³⁷:

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Աշխարհի մոդէլի մասին բաւական նիւթ պահպանուել եւ մեզ է հասել բանասիրութեան շնորհիւ: «Վահագնի Ծնունդը» հնագոյն առասպել-երգը սկսում է հենց աշխարհակառոյցի ներկայացմամբ, իւրաքանչիւր շերտ երկունքի մէջ է, եւ ծնում է Վահագնը: Վահագնը երեք շերտերը կապող հուր-լոյսն է³⁸, որ իջնում է երկնքից երկիր եւ ծով³⁹: Կրակը նոյնպէս կարող է ընկալուել որպէս տիեզերական ծառ-առանցք, ուղղահայեաց աշխարհի մոդէլ, որի շուրջ ձեւատրւում է աշխարհը. վեր շարժուող կրակը կապ է հաստատում աշխարհակառոյցի մասերի միջեւ, առանձնացնելով աշխարհը քառսից՝ արտայայտելով աշխարհի յարաշարժական հաւասարակշռութիւնը⁴⁰:

Համաձայն Ալաշկերտի նիւթի. Աստուած հրամայեց, եւ ստեղծուեցին երկինքն ու երկիրն իրենց եօթ աստիճաններով կամ յարկերով: Երկնքի առաջին յարկը երկրի մակերեսոյթն է, երկրորդը՝ ամպերը, երրորդը՝ լուսինը, չորրորդն՝ արեգակը, հինգերորդը՝ աստղերը, վեցերորդը՝ հրեշտակների ու սրբերի կայանը եւ եօթերորդը՝ Աստծոյ աթոռը, որ լուսեղէն է եւ դրուած է սերովբէների ու քերովբէների թեւերի վրայ⁴¹: Թէ՛ երկնքում եւ թէ՛ երկրում կայ Սեւ ջուր ովկիանոս. ջրհեղեղի ժամանակ երկինքն ու երկիրը պատռուեցին, եւ Սեւ ջուրը ողողեց երկիրը: Ինչպէս երկրի վրայ, այնպէս էլ ծովի յատակին կան լեռներ ու դաշտեր, իսկ լեռների ու դաշտերի տակ կան ծովեր ու ովկիանոսներ, եւ դրանք յաւերժական շրջապտոյտի մէջ են: Երկիրը տափարակ է ու շրջանաձեւ՝ անիւի պէս, դրուած է վիթխարի եզան կոտոշների վրայ: Երբ միջատները խայթում են եզան աչքերը, նա ցաւից ցնցում է գլուխը, այդ ժամանակ լինում են երկրաշարժեր: Ըստ այս աւանդութեան, Լեւիաթան ծովը պատել է երկրի չորս կողմն

այնպես, որ գլուխը պոչից մի թզաչափ հեռու է: Լեւիաթանը շարունակ հետամուտ է բռնել եւ կծել իր պոչը՝ լողալով երկիրը շրջապատող ովկիանոսի մէջ՝ երկրին փաթաթուած: Բայց Լեւիաթանը չի կարող կծել իր պոչը, քանի որ ստեղծած օրից մինչեւ աշխարհի վերջը մագաչափ չի աճել: Եթէ Լեւիաթանը բռնի իր պոչը, ապա աշխարհը ջարդուփշուր կը լինի: Իր պոչը բռնելու համար նրա ցատկերից լինում են երկրաշարժներ: Երկիրը եւս ունի եօթ աստիճան-յարկեր, վերեւից ներքեւ. Դժոխք, Սանդարամետք, Տարտարոս, Գեհէն, Անդունդք, Անյատակ: Տիեզերքն իր ամբողջութեամբ երեք գլխաւոր յարկերի է բաժանում, առաջինն ստորգետնեայ աշխարհն է, երկրորդը՝ երկրի վրայ, երրորդը՝ երկնքի մէջ: Այս երեք յարկերում էլ ապրում են մարդիկ, որոնք զբաղում են երկրագործութեամբ եւ երկրի վրայի այլ գործերով: Տարբերութիւնը միայն հագուստի մէջ է, ներքեւի յարկի մարդիկ իրենց գօտիները ծնկների վրայ են կապում, միջինը՝ մենք՝ փորի վերին մասի վրայ, իսկ վերին յարկի մարդիկ՝ սրտի վրայ: Երկիրը սուրբ է, որպէս Աստծոյ ձեռքերի գործ, ինչպէս երկինքը⁴²: Գօտիների տեղադրութիւնը բխում է մարդու մարմնի եւ տիեզերքի համադրութիւնից. գլուխը երկինքն է, որովայնը՝ երկիրը, իսկ գօտկատեղից ներքեւը՝ ստորերկրեայքը:

Նոր Բայազէտում հաւատում էին, որ երկնակամարը մի անսկիզբ եւ անծայր ծով է, որ կազմուել է, երբ Աստուած երկրի վրայի ջրերը բաժանել է: Այստեղ էլ այն եօթ շերտ է, երկնակամարից վերեւ գտնւում է Աստծու ոսկէ գահը, իսկ աւելի վերեւ՝ եօթ ափ ջուր, որից երբ Աստծուած բարկանում է, մի կաթիլ է թափւում նրա գլխին՝ հանդարտեցնելու⁴³: Երկիրը տափարակ է, անծայր եւ անվերջ: Յամաքը շրջապատուած է Մեռեալ ծովի կամ ովկիանոսի ջրով, ուր մշտական խաւար է տիրում եւ միայն մի մեծ ձուկ է ապրում: Այս ձուկը, ինչպէս եւ ալաշկերտցիների Լեւիաթանը, փաթաթուել է ցամաքին եւ մի թիզ է մնացել, որ գլուխը պոչին հասնի, երբ հասաւ՝ աշխարհը պիտի կործանուի: Երկիրը կանգնած է եզան պոզերի վրայ, երբ նա Աստծու հրամանով ցնցում է գլուխը՝ երկրաշարժ է առաջանում: Երկիրը բաղկացած է լոյս եւ մութ աշխարհներից: Լոյս աշխարհը երկրի վրայ է, իսկ մութը՝ երկրի մէջ: Մութ

աշխարհում երկու խոյ կայ՝ սեւ ու սպիտակ, որոնք զալիս միմեանց հետ կուում են. եթէ մուօ աշխարհ ընկածը կարողանայ հեծնել սեւ խոյին՝ սա նրան կը տայ սպիտակին եւ վերջինս նրան կը հանի լոյս աշխարհ, իսկ եթէ սպիտակին հեծնի՝ սա կը գցի նրան սեւի վրայ եւ վերջինս կ'իջեցնի նրան մուօ աշխարհի խորքերը: Լոյս աշխարհում միշտ, Ադամից էլ առաջ, մարդիկ են եղել: Սրանք մարդակերպ են եղել, սակայն անասունի պէս անլեզու եւ անխելք: Սրանցից Աստուած ընտրել է Ադամին, խօսելու շնորհ եւ խելք տուել ու դրախտում բնակեցրել: Ծովերը անյատակ են եւ լի ձկներով, ծովային աղջիկներով (ծովահարս, ծովանուշ), սատանաներով, ձիերով եւ գոմէշներով⁴⁴:

Վարանդայում հաւատում էին, որ գետնի տակ ապրում է մի եղջերու, որի եղջիրին դրուած է մեծ կաթսայ, լի հեղուկով: Երբ հեղուկը տաքանում է, կոտորում է կաթսան՝ կտորները խփում են գետնին, եւ առաջանում է երկրաշարժը: Կամ գետնի տակ մի եզ կայ, պոչը դրած մէջքին, երբ շարժում է պոչը եւ խփում գետնին, երկրաշարժ է լինում: Կար նաեւ ձուկը. գետնի տակ մի ձուկ կայ, երբ մէջքը քոր է գալիս, շարժում է եւ իր հետ շարժում երկիրը⁴⁵:

Լոռիում հաւատում էին, որ կապոյտ երկնակամարը ահագին ծով է՝ կանգնած Աստծոյ հրամանով, դրանից բարձր գտնւում է Աստծոյ ոսկէ աթոռը: Երկիրը մեծ տափարակ է, որի շուրջ փաթաթուած է հսկայ Լիկիոն օձը, որի պոչը բերանից մի թիզ հեռու է: Լիկիոնը միշտ ուզում է բռնել պոչը, բայց չի կարողանում, եւ իր շարժումներից առաջանում են երկրաշարժեր: Երկրի ամենահեռատր վայրերում ապրում են սիրունատես օղուզներ (հսկաներ), աճիճ-պաճիճներ (գաճաճներ), որոնց մօրուքը հասնում է գետնին, թափազեօզներ (կիկլոպներ), կան եւ երկսեռ էակներ, որոնք իրենք իրենց բեղմնատրում ու ծնում են (անդրոգիններ): Ծովերն անյատակ են եւ սրանցում ապրում են բոլոր այն արարածները, որոնք կան երկրի վրայ⁴⁶:

ՀԵՔԻԱԹՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Աշխարհակառոյցի մասին որոշակի պատկերացումներ կարելի է կազմել նաեւ հեքիաթներից⁴⁷: Տարածուած հեքիաթներից են Լուս ու Մուօ աշխարհների առկայութեամբ հեքիաթները: Որպէս օրինակ վերցնենք դրանցից մէկը՝

«Ամմահական Խնձոր»⁴⁸ հեքիաթը: Հերոսին եղբայրները թողնում են հորում (անցք աշխարհների միջեւ), ուր կան երեք սենեակներ, իւրաքանչիւրը պատկանում է ժամանակային միատրներ խորհրդանշող 7, 12 եւ 24 գլխանի դեւերին, որոնք գերել են մէկական աղջիկ: Հերոսը նրանց ազատում է, բայց եղբայրների դաւի պատճառով մնում է հորում: Կրտսեր աղջիկը խորհուրդ է տալիս հերոսին՝ ուրբաթ օրը գնալ աղբիւրի մօտ, ուր երեք ոչխար կը տեսնի՝ սեւ, սպիտակ ու կարմիր, որ գալու են ջուր խմելու: Հերոսը սկզբից պէտք է ցատկի սեւի վրայ, սեւը նրան կը գցի կարմրի վրայ, կարմիրն էլ՝ սպիտակի, սպիտակն էլ լոյս աշխարհ կը հանի հերոսին: Սակայն հերոսը հակառակն է անում ու սեւ ոչխարը նրան գցում է մոլթ աշխարհ: Հերոսը մոլթ աշխարհն ազատում է աղբիւրի ակը փակած եօթ գլխանի վիշապից: Թագաւորից որպէս պարգեւ խնդրում է իրեն Լոյս աշխարհի ճանապարհը ցոյց տալ: Պարզում է, որ լոյս աշխարհ կարող է տանել միայն Զմրութ ղուշը: Հերոսը անտառում գտնում է հսկայ մի ծառ, որի վրայ Զմրութ ղուշի բոյնն էր: Երբ հսկայ վիշապը գալիս, փաթաթւում է ծառի բնին ու վեր սողում, որ ուտի ճտերին, հերոսը սպանում է վիշապին: Երախտապարտ ղուշը հերոսին հանում է լոյս աշխարհ: Այստեղ առկայ են երկու աշխարհներ, որոնք կապուած են միմեանց եւ արտաքին աշխարհի հետ հորի միջոցով: Առաջին աշխարհը եռաշերտ-հորիզոնական է. դէպի վերեւ, ինչպէս եւ ներքեւ կարելի է անցնել գունատոր՝ երեք աշխարհները խորհրդանշող ոչխարների միջոցով: Երկրորդ աշխարհը եռաշերտ-ուղղահայեաց է, եւ այստեղ առանցքը տիեզերական ծառն է, յստակ ներքեւով՝ վիշապ եւ վերեւով՝ Զմրութ ղուշ⁴⁹:

Աշխարհակառոյցին վերաբերող հեքիաթների միւս խումբը կապուած է Բոր կամ Կարմիր տիեզերական եզի հետ⁵⁰: Բոր եզի մի եղջիւրից մեղր է կաթում, միւսից՝ անմահական ջուր: Բոր եզը իմաստուն է եւ հերոսի պահապանն է, նա պաշտպանում է նրան խորթ մօրից: Ի վերջոյ, հերոսին փրկելու համար, եզը նրան փախցնում, բերում դնում է մի ծառի վրայ, իսկ ինքն արածում է: Գալիս է վիշապը, եզն ու վիշապը մենամարտում են, վիշապը յաղթում է, բայց մեռնելուց առաջ եզը ծառն ու վրայի հերոսին յանձնում է վիշապին. «Ամանաթ Աստուած, ամանաթ ծառ»:

Վիշապը միշտ այս ծառի տակ է ուտում իր զոհերին, այսինքն նա ծառի պահապանն է: Վիշապը հերոսին որդեգրում ու տանում է իր տուն, որը քառասուն սենեակ ունի: Վիշապի տանը կայ չորս գունատոր ձի՝ սեւ, սպիտակ, կարմիր եւ մոխրագոյն: Միայն մոխրագոյն ձին է այնքան հզոր, որ կարող է անցնել աշխարհների անցք-սահման հորի վրայով: Վիշապը գալիս է՝ ուսին մի ծառ, որն ունի քառասուն հազար ճիւղ, ամէն ճիւղ՝ քառասուն հազար թռչուն: Վիշապը հետապնդում է հերոսին, բայց խեղդում է ծովում: Քառասուն հազար ճղանի ծառը կրկնապատկում է տիեզերական ծառի ու իր պահապան վիշապի մոտիւր: Եզը հերոսի երկուորեակն է եւ խորհրդանշում է միջին՝ մարդկային աշխարհը, սակայն կապուած է նաեւ ստորգետնեայ աշխարհի հետ⁵¹: Հեքիաթում սովորական երեք ձիերի փոխարէն՝ չորս ձի է, որոնք խորհրդանշում են տարուայ չորս եղանակներն ու աշխարհի չորս կողմերը: Հզոր մոխրագոյն ձին զարուն է⁵²:

Տիեզերակառոյցի տարրեր կան նաեւ «Ձուկ Տղան»⁵³ հեքիաթում: Զուակ չունեցող վաճառականն երեխայ է խնդրում Աստծուց, եւ նրա կինը ձուկ է ծնում: Հերոսին ամուսնացնում են թագաւորի աղջկայ հետ, ով իր մօր խորհրդով այրում է հերոսի ձկան մաշկը, հերոսը դառնում է աղանի եւ թռչում, հեռանում է: Կինը գնում է նրան փնտռելու: Նա եօթ ճանապարհի մէջտեղում պանդոկ է կառուցում եւ ամէն անցորդի հարցումիւրձ անում: Մի անգամ մի հայր ու որդի հանդիպում են մի ժայռի, որի տակ դուռ կար, որից ներս, սփռոցի մօտ երեք աղանի նստած՝ խմում են հերոսի կենացը: Աղջիկը գնում է այդտեղ, թաքնում աղբրի մօտ: Երեք աղանիները գալիս են, աղբիւրի մօտ դառնում են գեղեցիկ աղջիկներ, Արաքին հրամայում են, որ բերի «ամանաթը»: Արաքը բարձրանում է ծառը, մի արկղ է իջեցնում, որը աղջիկները բացում են, արկղի միջի սրտի վրայից վերցնում են թուղթը, եւ դուրս է գալիս հերոսը: Աղջիկները լողանում են, յետոյ տղային դնում են արկղը, իրենք նորից դառնում են աղանի ու հեռանում են: Հերոսուհին կրկնում է նրանց գործողութիւնները, եւ մի տարի այդտեղ ապրում է արկղից ելած ամուսնու հետ: Աղանիների յայտնուելու ժամանակ աղջիկը շտապելուց թուղթը սխալ է դնում, աղանիներն ամէն ինչ

հասկանում են, եւ Արաբին հրամայում, որ արկղը տանի Բաղեմա քաղաքը: Աղջիկը ծառի մօտի աղբիւրից մէկ բուռ թանկագին գոհարներ է վերցնում ու գնում է մօտակայ քաղաքը: Նրա որդին լինում է արդէն 10 տարեկան, նա խաղում է այդ գոհարներով, թագաւորը դա տեսնելով, որոշում է կործանել երեխային: Տարբեր դժուար յանձնարարութիւններ է տալիս, որոնցից մէկն էլ լինում է Բաղեմա քաղաքից անմահական խնձորներ բերելը: Այդ քաղաքը դարպաս չունէր, տղան մտնում է ջրանցքով, քաղաքի կենտրոնի մեծ այգուց, մարմարէ ջրաւազանի մօտի խնձորենուց քաղում է խնձորները: Բայց մինչ այդ տեսնում է նոյն տեսարանը, որ եղել էր անտառում՝ աղանիների եւ արկղի հետ: Նա մօր հետ գալիս է Բաղեմա քաղաք, մայրը ազատում է ամուսնուն, աղանիների կաշին գցում է կրակը, եւ երեք գեղեցիկ աղջիկների հետ տուն վերադառնում⁵⁴: Անտառի բացատը կրկնապատկում է Բաղեմա քաղաքի կենտրոնական այգուն՝ տիեզերական ծառ-առանցքով, հրաշալի աղբիւր-ջրաւազանով: Իսկ հերոսը ծուկ եւ աղանի է, միաժամանակ վերին եւ ստորին աշխարհների ներկայացուցիչը եւ տիեզերական ծառը:

Թէեւ տիեզերական ծառի վրայ նստած թռչունի նախնական առասպելը կարծես թէ արծուի մասին է, այդուհանդերձ երկինքն ու երկիրը կապող առասպելական թռչունը կարող էր ներկայացուել տարբեր թռչնատեսակների ձեւով, մասնատրապէս, այն միանգամայն կարող էր ի յայտ գալ իբրեւ ցին, անգղ կամ գիշատիչ այլ թռչուն:

Այսպիսի թռչուն է Խարբերդի «Մոքոս» էպոսում հանդէս եկող Չեչէլ չերքէզը, որին բանասաց Մինաս Բաբարը նկարագրում է որպէս հաւի նման, սագի չափ սպիտակ-դեղնաւուն մի թռչուն, որի գլխին մազ չկայ, որի զոյգը համատեղ ապրում է մինչեւ 150 տարի եւ որը մահ չունի: Նրա մահը միայն այն ժամանակ է, երբ «բարձրէն սրընթաց կոժուրդայլէն կ'իջնայ, քարի ծառի կը դալի»: Երբ այս թռչունի բմբուկները թափում են, նա չի կարող թռչել, բայց կենդանի է մնում, եւ նրան կերակրում է իր ընկերը: Այդ թռչունը կարող է թռչել Աստոյ մօտ եւ լուրեր բերել, սակայն երբ շատ բարձր է թռչում, արեւն այրում է նրա գլուխը, ահա թէ ինչու է «չեչէլ», ճաղատ: Վէպի մէջ Չեչէլ չերքէզը

Մօքոսի մունեստիկն է, որ արագ սլանում է եւ լուր բերում մարդու համար անհասանելի տեղերից: Մօքոսը գտնում է Չեչէլ չերքէզին ծառի վրայ՝ իր ընտանիքի կորուստը ողբալիս, եւ թոչունը պատմում է, որ իր բոյնը կրակ են գցել, ծագերին վառել, նետով սպանել են կնոջը, իսկ ինքը ելել է երկնքի կէտը: Այնտեղ նրա վրայ յարձակուել են շահին-բագէն՝ վերելից եւ տողանը՝ (հաւանաբար ինչ-որ գիշատիչ թռչնազգի) ներքեւից, նրանք սարեր ու ձորեր են ընկել եւ կոուել երեք օր ու գիշեր, եւ միայն Ջմրուօ դուշի օգնութեամբ է Չեչէլ չերքէզին յաջողուել ազատուել: Բայց երբ նրանք իջել են երկիր, տեսել են, որ «աշխարք վառմուն է»⁵⁵:

Եւ այն կերպարին հանդիպում ենք Մինաս Բաբարի պատմած «Կրակոտ Ոսպ» հեքիաթում: Եւ նորից Չեչէլ-քերքէզը կապուած է Ջմրուօ դուշի հետ: Այդ Ջմրուօն է յայտնում թագաւորի գլխատում օրդուն կենդանացնելու ջուրը որոնող դերուիշին, որ «աշխրքի էրեսը Չեչէլ-քերքէզ կայ, ան գննա, ընի Ասրծու ստեղծածն է: Տահա չէ մեռեր»: Ջմրուօ դուշը գտնում է փետրագուրկ, ծերացած Չեչէլ-քերքէզին, որ պառկած է հողի վրայ եւ չի կարող թոչել: Երեք ժամ տետղ ընդհանուր աղօթքով նրա բմբուկները նորից աճում են եւ նա, պահանջելով միս եւ գինի, թոչում է դէպի երկինք: Ինը ոլորտներից բաղկացած երկնքի առաջին ոլորտն անցնելիս արեւն այրում է նրա գլուխը, յետոյ նա յայտնում է սառոյցի մէջ եւ հասնում է չորրորդ ոլորտ, որտեղ նրան է հասնում հրեշտակը եւ յանձնում կենաց ջրի կարմիր եւ ճերմակ սրուակները: Երբ ներքեւում թագաւորը հարցնում է թոչունին, թէ ինչու է նա վիրաւոր վերադարձել, Չաչալ-չերքէզը նկարագրում է. «մէկ դասը կրակ է, մէկ դասը սաստիկ ցուրտ է, մէկ դասը աժդահար է, մէկ դասը օձ ու կարիճ է»⁵⁶:

«Ղամաթի Նաղլը» հեքիաթում հերոսը օձ է, որի անուան արգելքի խախտման հետեւանքով նա դառնում է թոչուն եւ հեռանում է: Այս հեքիաթում հերոսին լուս աշխարհի հանող դուշը «քաչալ», 300 տարեկան է⁵⁷:

«Թաքաւերին Տղան ու Ծուին Ծառը» հեքիաթում եօթ սարի մէջ մի ծառ կայ՝ ճիւղերն երկնքով մէկ սփռած: Ծառի կատարին ճրագի նման լոյս տուող երեք ձու, ծառի տակ եօթ «ջանաւար» են քնած: Ըստ Թամար Հայրապետեանի, առկայ են տիեզերակառոյցի բաղադրիչները. ծառ, փչակ, ձու, թոչուն, օձ,

որոնք պահպանում են մակրո- եւ միկրոկոսմոսների ներդաշնակութիւնը⁵⁸:

Հեքիաթներում հանդիպում է նաեւ հորիզոնական մողէլը: Նման հեքիաթ է «Ծովինարը»: Հերոսը սկսում է ճանապարհորդութիւնը սեւ երկրից, յետոյ անցնում է սպիտակ եւ կանաչ երկրներ: Իր սիրելի Ծովինարն ապրում է կարմիր երկրում, ծովի միջի պալատում⁵⁹: Պառաւը Նհարի (հերոսի) խանչալը գցում է ծովը, Նհարը դառնում է կիսամեռ: Սեւ, սպիտակ ու կանաչ ընկերները գալիս են օգնութեան: Ձին՝ Բհարը ասում է, որ խանչալը կամ ծովի յատակն է, կամ աստղերին է հասել, կամ էլ ցամաքին է ընկել: Սպիտակ ծիաւորը գնում է դէպի աստղերը, կանաչը դէպի ցամաքը, սեւը՝ ծովի տակ⁶⁰: Եթէ իրար համադրենք գոյներն ու աշխարհի չորս կողմերը, ապա կը ստանանք. սեւ - արեւմուտք, սպիտակ - հիւսիս, կանաչ - արեւելք, կարմիր - հարաւ⁶¹: Ընդ որում կարմիր երկիրը գտնւում է ծովի (Վանայ Լիճ) մէջ: Ծովինարի պալատը, հնարաւոր է, առանձին աշխարհակառոյց է՝ ծով, կղզի, պալատ եւ աստուածուհի աստիճանաւորմամբ:

Աշխարհի հորիզոնական մողէլն առկայ է նաեւ Երուանդ Լալայեանի կողմից գրառուած «Արա Գեղեցիկ» ամանդավէպում⁶²: Արամ թագաւորը ապրում էր Մոսուլ քաղաքում, որը կոչւում է Նինուէ⁶³: Մի օր նա կուրանում է եւ բժշկուելու համար, մի ծերունու խորհրդով, իր կրտսեր որդի Արա Գեղեցիկին ուղարկում է Վան, Շամիրամի մօտ, բերելու իր դեղը: Երկար գնալուց յետոյ Արան եւ նրա երկու եղբայրը հասնում են մի բերդի, որի մէջ բանտարկուած աղջիկը՝ Խազալին, զգուշացնում է, որ սա մի հզօր դէպի բերդ է: Արան իմանալով, որ դեւը գնացել է արեւմուտք, եզրակացնում է, որ նա կը վերադառնայ արեւելքից: Ազատելով Խազալիին դէպից, նրան տալիս է իր մեծ եղբօրը: Երկրորդ բերդում աղջկայ տէր դեւը նշուած չէ, թէ որ կողմ է գնացել եւ որ կողմից է գալու: Երկրորդ աղջկան տալիս է իր միջնեկ եղբօրը: Երրորդ բերդը ժայռի վրայ էր, որի միջի աղջկայ աչքերը փայլում էին արուսեակի պէս: Այս դեւը եօթ գլխանի էր, եւ առաւօտեան դէպի հարաւ էր գնացել, ուրեմն երեկոյեան պէտք է հիւսիսից գար⁶⁴: Աղջկայ անունը Ջուարթ է, նա Բոօ թագաւորի դուստրն էր: Ջուարթը Արային

խորհուրդ է տալիս ինչպէս հասնել Շամիրամին. երեք օր գնալուց յետոյ հասնելու է մի լեռան, որ Հայաստանի ու Վանի սահմանն է, լեռան վրայ հսկայ սաղարթախիտ մի ծառ կայ, որի կոճղի մօտ նստած է մի ծերունի, այդ ծերունին իր խորհուրդներով կ'օգնի Արային: Այդ Ծառուկ ծերունին երեք դեւերի հետ Շամիրամի երկրի չորս պահապաններն են, իսկ ծառի քառասուն տերեւները, ծերունու կախարդութեամբ, հզօր կարողութիւններ են տալիս Արային⁶⁵:

Եռամաս ուղղաձիգ կառոյցի կողքին առկայ է աշխարհի տարբեր մասերի, յատկապէս դրախտի եւ դժոխքի երբեմնի հորիզոնական ընկալումը՝ դրախտի «հակառակ կողմում» դժոխքն է⁶⁶: Դրախտում է գտնուում Անգին քաղաքը, որից այն կողմ լուսոյ դրախտն է, ուր աճում է ծառ խնկենին՝ հոգիների ամենասիրած ծառը, անթառամ ծաղիկը, վարդենիներ են.: Այնտեղ ցայտում է Կաթնաղբիւրը՝ անմահութեան աղբիւրը⁶⁷: Գարեգին Սրուանձտեանցի մօտ. «Տաքմէր Ասիկ, որ Կրեզնք էր, կգետր, Կրեսայ մազէ կարմունջ կապեր են. էն գլուխ դրախտն էր, էս գլուխ դժոխք»: Նկարագրում է դժոխքը, ուր սատանաները տարբեր կերպ տանջում են յանցաւորներին: Դրախտում «հազար հազար հրեշտակներ, ուր կողկուշտ [շրջապատ] անմահութնի ջրեր, անմահութնի խնձոր, ծաղիկներ, պտուղներ, Աստուծո սեղան Աստուծո բարութնով լի ուր առջեւ. հրեշտակ մինքն էր դարձէ իդոր նստած աթոռ, իդոր բնակուած դարպասի քարեր մէկ մէկ արեգակին»⁶⁸:

Երբեմն տիեզերական ծառն արտայայտում է երեք ոլորտներից մէկը խորհրդանշող կենդանիով, հիմնականում ստորին աշխարհի բաղադրիչ հանդիսացող վիշապով կամ օձով: Հին աշխարհում տիեզերական օձը կամ վիշապը տիեզերակառոյցի, աշխարհի առանցքի նախատիպարի մարմնատրումներից մէկն էր, մանաւանդ եթէ դա գրեթէ ամբողջ շրջան կազմող օձ էր (հմմտ. ալքիմիական ուրուբորոսի, նաեւ վերը բերուած ժողովրդական ասանդութիւնների Լիկիոն օձը կամ Լեւիաթան ձուկը⁶⁹): Տիեզերական ծառի հետ օձին կապում են օձ-ծառի առասպելները: «Աղքատ Յովանէս» հեքիաթում աղքատը երկու սատկած օձ է բերում, գցում իր բակում, որոնք վերածում են երկու գեղեցիկ ծառերի, որոնց տեսակն ու նիւթը

ոչ ոքին յայտնի չէ⁷⁰: Նոյն մոտիվը ունի «Օծուենի Ծառ» հեքիաթը, որտեղ սատկած օձի դիակից ծլում է հրաշալի բարդի ծառը⁷¹: Իբրեւ տիեզերական ծառ օձը դառնում էր իմաստունի կամ ուղղակի սրբազան գաւազան եւ աստուածային պիտոյք (ատրիբուտ)⁷²: Կենաց եւ տիեզերական ծառերի հետ գաւազանի առնչութիւնը վկայուած է «Գաւազանագովք» տաղում: Գաւազանը ծաղկել է դրախտում, արարչի ձեռքով, հողից չի բուսել, ջուր չի ըմպել, գաւազանը կանգնել է Գողգոթայում՝ Ադամի գանգի վրայ, գաւազան-խաչին բազմել է սիրամարգը, գլխին՝ ոսկէ թագը, սիրամարգի ահից դողում է դժոխքը, նրա ձայնից ցնծում է երկինքը⁷³: Գաւազանը նոյնանում է խաչին, իսկ վրայի սիրամարգը՝ Քրիստոսն է:

Թէեւ ասանդական պատկերացումներով աշխարհակառոյցն ունի երեք, չորս, կամ եօթ առանցքային կէտեր, կեանքը հիմնականանում ընթանում է միջին ոլորտում՝ երկրի վրայ, եւ տեսանելի է երկինքը, որն էլ ոչ պակաս դերակատարութիւն ունի մարդկանց կեանքում: Ուստի հիմնական տիեզերակառոյցը, եթէ կարելի է այդպէս ասել, արտայայտուած է Երկինք-Երկիր անխախտելի կապով: Երկինքն ու Երկիրը ստուգաբանում են որպէս երկու իր (սիւս) ունեցող ոլորտներ: Ըստ Յովհաննէս Երզնկացու. «*Չի երկինքն երկու իրք է՝ հուր եւ օդ, եւ երկիրս երկու իրք է՝ հող եւ ջուր*»: Ըստ Երզնկացու երկիր է կոչում, որովհետեւ ունի չորս պատճառ, որոնցից առաջինն է. «*Նախ զի երկու երկնիցս ծայր ունի. երկայն զարեւելս եւ զարեւմուտս եւ երկու ի յայն՝ զհիսիս եւ զհարաւ...*»⁷⁴:

Տիեզերական ծառը, աշխարհակառոյցը կարող է տեղադրուած լինել նաեւ նաւի վրայ⁷⁵: Բայց երբեմն նաւին փոխարինում է սայլը: Ուրարտական մի կնիքի վրայ պատկերուած է քառանիւ մի սայլ, որի վրայ ձողերով ամրացուած է ծառը, սայլի ետեւում հանդիսաւոր տեսքով մի քուրմ եւ արծուառիծ: Նման մի կնիք էլ յայտնաբերուել է Թուրակ-Կալէում⁷⁶: Ըստ Ասատուր Մնացականեանի, նաւով կամ սայլով տօնահանդէսը տեղի է ունեցել զարնանը, արտայայտելով ծննդի կամ վերածնութեան գաղափարը⁷⁷: Այս տեսարանին շատ մօտ մի տեսարան է նկարագրում Գրիգոր Նարեկացու «Տաղ Յարութեան» տաղում: Մասիսի վրայ մի սայլ

կայ, որի վրայ ոսկե աթոռ է, աթոռին բեռեզ ծիրանի, վրան որդին արքայի, նրա աջից վեցթեանի քերովբէներ, ծախից՝ բազմաշէյ պերովբէներ, առջեւից մանուկներ, որդու գիրկը՝ սաղմոսարան եւ քնար, ծեռքում՝ փրկչական խաչ: Սայլը զարդարուած է արծաթով, ոսկով, ապրշումով, կերպասով ու ծաղիկներով: Սայլի անիւները չորս Աւետարաններն են: Լծուած է սեւ ու սպիտակ եզներով, որոնց եղջիրները խաչանման են, իսկ մագերը՝ մարգարիտ: Սայլը տեղից չի շարժում, մինչեւ չի գալիս խարտիշագեղ Սուրբ Կարապետը, եւ սայլը իջնում է՝ անուշահոտ բուրմամբ ընթանալով: Սայլն իջնում է Մասիսի արեւելեան լանջով եւ մտնում Երուսաղէմ (Էջմիածին): Եւ Մասիսը համադրում է Սիոն լեռան հետ⁷⁸:

Ինչպէս ասուել է, աշխարհի առանցքը յաճախ արտայայտում է սրբազան լեռան կերպարով: Հայկական Լեռնաշխարհը հարուստ է բարձր գագաթներով. դրանցից ոմանք ընկալուել են որպէս աշխարհի առանցքներ: Այստեղ կ'անրադառնանք միայն Մասիս Լեռան ժողովրդական-աւանդական ընկալումների մի մասին: Մովսէս Խորենացին, խօսելով Հայկի սերունդների կողմից Հայկական Լեռնաշխարհի մշակութայնացման մասին, գրում է, որ Արամանեակը գալիս, հասնում է մի դաշտավայր, որի արեւմուտքից գետ էր անցնում, իսկ դաշտը ձգում էր արեւելքի կողմը, եւ դաշտավայրում կային բազմաթիւ աղբիւրներ: Դաշտավայրի հարաւային բարձր լեռն Արամանեակը կոչեց իր անունով՝ Արագած, իսկ դաշտի հիւսիսում գտնւում էր արեգակնաճեմ, սպիտակափառ գագաթով մի լեռ, որ բուսել (ծառի մոտիւ) էր երկրից՝ պինդ գօտեւորուած մարդու երեքօրեայ ճանապարհի շրջապտոյտով եւ հետզհետէ սրւում էր դէպի վեր՝ «իսկապէս մի ծերունի լեռ»⁷⁹: Այդ լեռը, Արամանեակի թոռան՝ Ամասիայի անունով կոչւում է Մասիս, որի ստորոտում նա շինում է երկու տուն, մէկն արեւելք, միւսն՝ արեւմուտք⁸⁰: Այս դաշտավայրը, որի արեւմուտքում Արաքս գետն է, հարաւում՝ Արագածը, իսկ հիւսիսում՝ Մասիսը, որից արեւմուտք եւ արեւելք երկու իշխանական տներն են՝ Արարատեան դաշտավայրը՝ հայոց միջնամաս-կենտրոնը:

Աժդահակը երազում տեսնում է մի բարձր լեռ, որի գագաթին երեսում է երկնագոյն քօղով մի ծիրանագգետ կին, որ բռնուած

էր ծննդի երկունքով: Նա երեք զաւակ ծնեց, կատարեալ դիւցազուններ: Առաջինն առիւծ հեծած՝ սլանում էր դէպի արեւմուտք, երկրորդն ինձ հեծած՝ դէպի հիւսիս, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշաւում էր դէպի Աժդահակի տիրոյթը (Մարաստան՝ արեւելք)⁸¹: Այսինքն Աժդահակը Մասիսն ընկալում է որպէս Հայոց Երկրի կենտրոն, որից աշխարհի կողմերն են սլանում, ամենայն հաւանականութեամբ, Տիգրանի որդիները՝ Բաբը, Տիրանը եւ Վահագնը⁸², զուգէ նկատի ունենալով, որ նրանք յետագայում նուաճելու են Մասիսից այդ երեք կողմերն ընկած տարածքները:

Յետագայում Տիգրանը, յաղթելով Աժդահակին, նրա կնոջը՝ Անուշին ու Աժդահակի սերունդներին բերում, բնակեցնում է Մասիսի արեւելեան ստորոտում⁸³: Աժդահակի ու Անուշի սերունդից Արգամը (Արգաւան), Մուրացան տոհմի նահապետը, տիրում է Մասիսի ամբողջ ստորոտին: Մի օր Արգաւանը դաւ է նիւթում հայոց արքայ Արտաշէսի դէմ, եւ դրա համար Արգամին իր բոլոր զաւակներով կոտորում է Արտաշէսի որդին՝ Արտաւազը⁸⁴: Սակայն Արտաշէսի մահից յետոյ, հալածելով իր բոլոր եղբայրներին, Արտաւազը տիրանում է ամբողջ Հայաստանին: Արտաւազը բողոքում է մեռած Արտաշէսին, թէ նա ինչպէ՞ս իշխի դատարկ երկրում, ինչի համար Արտաշէսը նրան անիծում է, որ քաջքերը որսի ժամանակ Արտաւազին տանեն դէպի Ազատն Մասիս: Մի անգամ նա անցնում էր Արտաշատ քաղաքի կամրջով՝ Գինա ակունքների մօտ որսի համար, յանկարծ խելագարում է, ձիուց ընկնում մի խոր փոսի մէջ ու անհետանում⁸⁵: Արտաւազը շղթայում է մի քարանձաւի մէջ, երկու շուն կրծում են նրա շղթաները, եւ նա ջանում է դուրս պրծնել ու կործանել աշխարհը, բայց դարբինները Կիրակի օրերը երեք կամ չորս անգամ կռանով խփում են սալին, որ Արտաւազի շղթաներն ամրանան, ու նա դուրս չգայ: Ըստ առասպելի միւս տարբերակի, Արտաւազին դեռ օրօրոցում գողացել են վիշապազուններն, իսկ փոխարէնը դեռ են դրել⁸⁶:

Այսպիսով Արտաւազը մի կողմից վիշապազուններին յաղթողն է, գտնում է տիեզերական լեռան վրայ, միւս կողմից՝ ինքն է վիշապ, գտնում է ներքեւում: Թէեւ Մուրացանները վիշապազուն են կոչւում, քանի որ սերում են Աժդահակ-

վիշապից, սակայն դեռեւս ուրարտական աղբիւրներում յիշատակում է Կուառզանի երկիրը⁸⁷, որ ընկնում է Մասիս Լեռան արեւելեան - հարաւային լանջերին: Յատկապէս ուշագրաւ է, որ ուրարտական վիշապանման դիցոյթ Կուեռան պարսկերէն անուանուել է Աժի-Դահակ, իսկ Արգաանը Աժդահակի եւ Անուշի սերնդից էր, ում հետ եւ պատերազմում էր Արտաւազը⁸⁸: Արտաւազը Մասիսի շուրջ ձեւաորոտող աշխարհին հաղորդում է յարաշարժական (դինամիկ) կառուցուածք. միաժամանակ լինելով ե՛ւ վերելք, ե՛ւ ներքելք, ամբողջացնելով շրջանը:

Ժողովուրդը Մասիս սրբազան լեռը համարում էր ընդհանուր մարդկութեան երկրորդ ծնող, քանի որ այս սարի վրայ է հանգչել Նոյեան Տապանը: Մասիսը նաեւ անմատչելի է, ոչ ոք չի կարող բարձրանալ նրա գագաթը: Նոյնիսկ սուրբ Մծբնայ Յակոբ հայրապետը Աստծոյ հրամանով չի կարողացել բարձրանալ Մասիսի գագաթը⁸⁹: Ըստ աւանդազրոյցի, Արագածն ու Մասիսը վիճում են, եւ Արագածն անիծում է Մասիսին, որ նրա վրայ մարդ չբարձրանայ, մատաղ չանի, եւ մինչ օրս էլ մարդ չի բարձրացել Մասիսի վրայ ու մատաղ չի մորթել⁹⁰:

Նոյեան Տապանի առասպելը ուշ է կապուել Ազատն Մասիսի հետ: Յամենայնդէպ այն յայտնի չէ Ժ. դարի պատմիչ Թովմա Արծրունուն, եւ ըստ նրա Տապանը իջեւանել է Կորդուաց լեռների Մասիուսի վրայ⁹¹: Ժողովրդական առասպելական շարքը կապում է ջրհեղեղի եւ Նոյի պատմութիւնը մի կողմից՝ Ռշտունիքի, Մոկսի ու Տարօնի հետ, միւս կողմից՝ Նախիջեւանի հետ⁹²: Ս. Յակոբ Մծբնացու աղբիւրի հետ կապուած աւանդազրոյցներ պատմում են ե՛ւ Մասիսի, ե՛ւ Ռշտունիքի լեռների մասին⁹³, ընդ որում Ս. Յակոբ Մծբնացին բարձրացել է Կորդուաց լեռները, սակայն Մասիս նա չի կարողացել բարձրանալ: Ըստ երեւոյթին Մասիսը, աւելի ու աւելի ընկալուելով որպէս Հայոց Աշխարհի կենտրոն, իր վրայ է առել նաեւ ջրհեղեղի առասպելաբանութիւնը, քանի որ միայն աշխարհի կենտրոն-առանցքից կարող է սկսուել նոր աշխարհը:

Սովորական մահկանացուն չի կարող բարձրանալ սրբազան լեռան գագաթը, քանի որ դա նշանակում է

ճանապարհորդութիւն դէպի աշխարհի կենտրոն: Միայն շամաններն ու հերոսներն են իրականում բարձրանում տիեզերական լեռը⁹⁴: Ըստ Ագաթանգեղոսի, երբ կառուցում էր Մայր Տաճարը, Տրդատ արքան անցաւ եօթնօրեայ ճանապարհը դէպի Մասիսն ի վեր, որի գագաթից բերեց ութ հսկայական քար, որոնցից ոչ մէկը չէր կարող շարժել թէկուզ մարդկանց ահագին բազմութիւն⁹⁵: Ըստ ժողովրդական ասանդագրոյցի, երբ Տրդատը տաճարի քարերը բերում էր Մասիսի գագաթից, Լուսատրիչն աղօթում էր, որ նա յաջող տեղ հասնի: Տրդատը սրտնեղում է, եւ երբ Լուսատրիչը դադարում է աղօթել, Տրդատը մինչեւ ծնկները խրում է հողի մէջ⁹⁶:

Ըստ ժողովրդական հաւատալիքների, Ուռնայի կալում է լինելու Ահեղ Դատաստանը: Լոռուայ մի հեքիաթում նկարագրում է հարթավայր, ծայրին մի ծառ, որի մի «տուտը» երկնքում է, միւսը՝ գետնին, տակն էլ: աղբիւր: Ծառի վերետւում գտնւում է Ուռնայի կալը եւ այդ ծառով հերոսը բարձրանում է երկինք՝ Ուռնայի կալ⁹⁷: Ուռնայի կալում Քրիստոսի ահեղ դատաստանի մոտիւր շատ տարածուած է բանասիրութեան մէջ⁹⁸, աստղային ծածկագրում այն նշանակում է Ծիր Կաթինը⁹⁹: Ուռնայի կալ հասնելու համար պէտք է անցնել Մազէ կամուրջը, որի տակով հոսում է Կպրէ գետը, որի վրայից արդարները անցնում են թռչելով, իսկ մեղաւորներն ընկնում են գետը՝ յալիտեան չարչարուելու¹⁰⁰: Ուռնայի կալում կատարուող վերջին դատաստանին նուիրուած առասպել-երգում յիշատակում է այդ ժամանակ փչող հրեղէն Հարաւի քամին, իսկ արեւելքից ելնում է սուրբ խաչը՝ Քրիստոս, եւ նստում է Ուռնայի կալում, իր անողորմ աթոռին¹⁰¹: Ինչպէս նշում է Եպս. Ժամկոչեանը, Ուռնայի կալը *Աստուածաշունչ*ում չի կապւում Յիսուսի եւ Ահեղ Դատաստանի հետ, այլ դա այն վայրն է, ուր Դավիթ արքան շինեց զոհասեղան Տիրոջ հրամանով՝ իր մեղքով ժողովրդին պատուհասած ժանտախտից ազատելու համար (Գ. Թագ. ԻԴ., 16-25), եւ այդ պատկերացումը զուտ հայկական ժողովրդական ասանդոյթ է¹⁰²: Ահեղ դատաստանը կապւում է նաեւ խնկի ծառի հետ: Աղօթքներից մէկում Սուրբ Կոյսը ծայն է տալիս Պետրոսին ու Պօղոսին, կանչում է նրանց Հռոմսիմի հարսանիքին: Փչում են Գաբրիէլական փողերը, կապում են մազէ կամուրջը, տնկում են

խնկի ծառը՝ ջրկում են արդարին մեղաւորից: Արդարներն, անցնելով մազէ կամրջով, յայտնում են խնկի ծառի վրայ, իսկ մեղաւորները չորում-լացում են¹⁰³:

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՅՑԸ ՎԻՊԵՐԳԵՐՈՒՄ ԵՒ ՓՈՔՐ ՍԵՌԻ
ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ՆԻՒԹԵՐՈՒՄ

Աշխարհի մոդէլի, տիեզերական ծառի մոտիւնները բաւական տարածուած են ժողովրդական հանելուկներում: Այդ հանելուկներում պատմում է մի հսկայ ծառի մասին, որն աճում է Հնդու քաղաքում եւ ճիւղերը սփռել է աշխարհով, ամէն ճղին կամ կատարին՝ սինամահալք, կամ ճրագ¹⁰⁴: Ըստ Սարգիս Յարութինեանի, հանելուկների ծառը տիեզերական է, միմեանց է կապում երկինքն ու երկիրը, իսկ Հնդու քաղաքն՝ աշխարհի կենտրոնն ու երկնային քաղաքն է: Քրիստոնէութեան ազդեցութեամբ՝ Հնդու քաղաքը ընկալում է որպէս Երուսաղէմ՝ աշխարհի կենտրոն, ծառի աշխարհասփիտ ճիւղերը՝ քրիստոնէութիւն, սինամահալք՝ Քրիստոս, ճիւղերին վառուող ճրագները՝ առաքեալներ ու սրբեր, աշխարհով մէկ քրիստոնէութեան հաւատի լոյս տարածողներ¹⁰⁵: Հանելուկներում ծառը կարող է նաեւ արտայայտել տիեզերական ժամանակը, որն արտայայտում է մէկ տարով¹⁰⁶. տարին՝ ծառը, 12 (ամիս) կամ եօթ (շաբաթ) ճիւղ, չորս (եղանակ) կամ երեսուն (ամիսների օրեր) տերեւ կամ խնձոր, կէսը սպիտակ (ցերեկ), կէսը՝ սեւ (գիշեր)¹⁰⁷:

Մարդու մարմինը, մասնաւորապէս գլուխը եւս կարող է արտայայտուել ծառի, սինի կամ լեռան կերպարներով, որպէս տիեզերք¹⁰⁸: Մարդն իբրեւ ծառ եւ սին մանրակոսմոս է: Ինչպէս տիեզերական ծառը համախմբում, կազմակերպում, է աշխարհի տարբեր մասերը, նրա տարբեր գօտիները ուղղահայեաց եւ հորիզոնական դասաւորութեամբ՝ ի հակակշիռ քառսային խառնակ անորոշութեան, այդպէս էլ նոյն ծառի կամ սեան պատկերն է միաւորում մարդու մարմնի տարբեր մասերը¹⁰⁹:

Աղօթքները եւս արտայայտում են տիեզերակառոյցի մասին պատկերացումներ: Աղօթքներին յատկապէս բնորոշ են սահմանային անցումները՝ քառսից կոսմոս, կամ ժամանակի աւարտ եւ Ահեղ դատաստան: Քառսից կոսմոսին անցնող

աշխարհի մասին «Ծառ մի կայր ի մէջ երկրի» սկզբնատողով աղօթքն է: Այդ ծառը չունի ո՛չ ճիւղ, ո՛չ տերեւ, ո՛չ արմատ. վրան մի անգլուխ, անթեւ, անոտք արծիւ է նստել, նրան հարցնում են, թէ ինչո՞ւ է նստել, պատասխանում է. որ ուտի մարդկանց միսը եւ ուղեղը ծծի ու կուրացնի: Եւ արեգակի սրտում գտնուող 365¹¹⁰ հրեշտակապետերն ու հրեշտակները կապում են (հմայական մոգութիւն) արծուին, որ էլ մարդկանց չվնասի¹¹¹: Սա, թերեւս, քառասային վիճակ է, կոսմոսը նոր է ձեւաւորում, եւ այն ձեւաւորում են 365 սրբերը, որ արեգակի՝ Քրիստոսի սրտում են:

«Գնացի ծովը, ծովն էր ծիրանի» սկզբնատողով աղօթքը նոյնպէս սահմանային իրադարձութեան մասին է: Ծիրանի ծով, մէջը ծիրանի (գոյն) ծառ, ծառի ճղերը, ճղերի վրայի բունը, բնի միջի ճուտը նոյնպէս ծիրանի են, գնացողը անոտք ելնում է ծառն, անդանակ մորթում է ճտին ու անեւի ուտում է¹¹²: Ծիրանի ծով-քառսը հակադրում է իր մէջ գտնուող ծիրանի ծառին, որ տիեզերական ծառն է, իսկ ծիրանի ճտի անբնական մատաղը փոխակերպում է քառսը կոսմոսի: Ըստ Յարութինեանի, հմայական բոլոր աղօթքները, որոնցում պատկերուած է տիեզերական ծառը, ուղղուած են տարբեր հիւանդութիւնների՝ մարդու բնական վիճակի խախտման դէմ: Մարդու վիճակը կախուած է այդ տիեզերական ծառի վրայ հերթագայութեամբ դասատրուած առարկաների ու կենդանիների կարգից, այսինքն՝ կարգուկանոնից: Որպէսզի մարդն ապաքինուի, զոհաբերում է ծառի վրայ գտնուող թռչունը կամ օձը¹¹³:

Տիեզերքը կազմակերպում է ըստ Աստծոյ հրամանի, եւ մեծամտացողներին, Աստծուն չսողներին պատիժ է սպասում՝ Աստուած կործանում է նրանց աշխարհը, այդ է վկայում գողտրիկ մի երգ, հաւանաբար աղօթք. արընկին ծովում կար ծառ, որի կատարին հաւը հիւսել էր իր բոյնը, որն ընկալում է որպէս քաղաք, տիեզերակառոյց: Հաւը սարքեց այն՝ գերաններ բերելով աշխարհի տարբեր կողմերից: Բոյնը սարքելուց յետոյ, մեծամտանալով, Աստծուն փառք չտուեց ու նստեց իր բնին: Աստծոյ հրամանով կրակ է ընկնում բոյնը եւ ամբողջն այրում է¹¹⁴:

Թէ որքան բարդ կառուցուածք է ունեցել Հայկական Աշխարհի մոդէլը լաւագոյնս արտայայտուած է «Տաղ

ուրախութեան խաղու ի վերայ ծովու եւ նաւի» ծիսական երգում: Այս մեծ տաղում հերթականութեամբ նկարագրում է ուղղահայեաց տիեզերականոյցը, որ բարձրանում է ներքեւից վերեւ՝ ամէն մի մասում կրկնելով նախորդ կազմութիւնը՝ վրան աւելացնելով ամէն անգամ եւս մի մաս: Վերջում ստացւում է ամբողջական պատկերը, որ տրւում է վերեւից ներքեւ. ծուն բնի, բոյնը ճիւղի, ճիւղը ծառի, ծառը յենարանի, յենարանը խաչի, խաչը բեմի, բեմը վէմի, վէմը նաւի, նաւը ծովի, ծովը՝ մանր աւազի վրայ են, ծուից ելնում է ծագը, որի թեւերը խաչին են, ինքը արեւինն է, ծովն էլ ծոցում է¹¹⁵: Ըստ Մնացականեանի ծառն ու ճիւղը այստեղ խորհրդանշում են նաեւ հին զոհասեան գաղափարը, իսկ ծուից դուրս եկած ծագը թեւի խաչանշանով՝ զոհաբերումը Քրիստոսին, որի զոհաբերութեամբ կանգուն ու հաստատուն է մնում աշխարհի կարգուկանոնը¹¹⁶:

Քաղաքի, տաճարի ու տան որպէս աշխարհի մոդէլ ընկալուելու հանգամանքը դրսեւորում է ժողովրդական աւետիսների մէջ: Աշխարհակառոյցը հաստատող, նորոգող, նոր մոդէլ ձեւատրող նիւթը առկայ է Լիլիթ Սիմոնեանի դասակարգմամբ՝ «աւանդական» աւետիսներում: Այդ աւետիսների հիմնական նիւթը երեք կերպարի ճանապարհորդութիւնն է դէպի հրաշալի անտառը՝ Չամչա մէրինը (մայրիների կամ Շամաշի անտառ), որտեղ աճում է սրբազան խնկի ծառը: Նրանց առաքելութիւնն է տիեզերական ծառը բերելը՝ սրբազան քաղաքի մայր տաճարի շինարարութեան համար¹¹⁷: Այդ ծառը դառնալու է կենտրոնական սիւնը, որի միջոցով վերականգնուելու-կառուցուելու է քաղաք-տաճար-տունը եւ ստեղծուելու է նոր աշխարհ, որի կենտրոնը տան կրտսեր զաւակն է՝¹¹⁸: Ծառը կտրելուց՝ սղոց քաշելուց արինն է \$22ում, կացին զարկելուց՝ ծառը ճշում է: Վերջապէս կտրում են, լծում են քառասուն մոզի, բայց մոզիները չեն կարողանում քաշել, բերում են Ուոֆայի պառաւի մոզին, որն էլ քաշում, բերում է ծառ խնկենին: Որոշ տարբերակներում լծում են Սերամ ու Սգամ եզներին, բայց նրանք իրար հետ չեն կարող լուծ քաշել, ուստի Սգամի փոխարէն լծում են Պառաւի մոզուն, նոր կարողանում են ծառը բերել: Ծառը բերելուց յետոյ նրանից սին են սարքում, որը

երկարում, կարճանում է, եւ նրանով շինում, թամամում են Երուսաղէմը: Յետագայ շարադրանքում մանրամասն նկարագրում է զարդարուող տունը, որը դառնում է տաճար եւ նոյնանում Երուսաղէմին (մի տարբերակում էջմիածնին). չորս կողմը սիւներ են կանգնեցնում, լուսեղէն կանթեղներ են կախում, սիւն ու գերանով Սողոմբաշ (հազարաշէն) են կառուցում, տանիքը ոսկուց, վրայի հողը մարգարիտ, թոնիրն էլ դառնում է եկեղեցի: Յետոյ տալիս են տան փոքր տղայի անունը եւ նկարագրում են նրան իբրեւ մեծ ծառի (գերդաստանի) ճուփ: Տղան երկար մազերը փռում է ծառի ճիւղին եւ ինքն էլ ճթանում է, իր կախարդական պտուղներից ու անմահական գինուց նախնիները գեղեցկանում եւ անմահանում են՝ նոյնանում ծառի հետ¹¹⁹:

Ծառ-սիւնը կապուած է եզի հետ, նրան բերում է հանդերձեալ աշխարհի ներկայացուցիչ՝ Ուռֆայի պառաւի մոզին: Ուռֆայի պառաւը տիեզերական Մեծմայրն է, որին եւ պատկանում է ծառ խնկենին¹²⁰: Եզը խորհրդանշում է տիեզերական ծառի միջին հատուածը, սակայն կապուած է նաեւ ստորգետնեայ աշխարհի հետ¹²¹:

Սիմոնեանը աւետիսի այս շարադրանքներում հաշում է երեք տիեզերական ծառ. ծառ խնկենին, տուն-տաճար-պալատի գլխաւոր սիւնը եւ տոհմածառը: Տան փոքր տղան ճուփն է՝ մէկ այլ ծառի պտուղ, սակայն նա նոր, ճթացող գերդաստանի հիմք պէտք է լինի: Աւետիսներում թոնիրը նոյնանում է եկեղեցուն: Այն դիտարկւում է իբրեւ ստորերկեայ *templum*՝ սրբավայր), աւելի ճիշտ՝ *mundus*՝ անցք, մուտք դէպի անդրաշխարհ¹²²:

Աւետիս երգելիս երեխաները երգիկից կողով էին իջեցնում, որի մէջ դրում էին նուէրները: Երգիկը կապում է միջին աշխարհը վերին աշխարհի հետ, իւրօրինակ մուտք ծառայելով դէպի վերին իրականութիւն: Հռոմէական տան երգիկը՝ նոյնպէս ծառայում էր իբրեւ մուտք ծիսական տարածութիւն եւ զուգահեռում էր քաղաքի «պորտ»ին, որը մուտք էր ստորգետնեայ թագաւորութիւն¹²³: Զրիեղեղի հետ կապուած հայկական առասպելաբանութեան վառ տեղական մոտիւն է ջրիեղեղի սկսուելը թոնիրից¹²⁴: Հիմնականում այս առասպելները կապում են երէց-երեցկին-աղքատ եռեակ հերոսների հետ:

Երեցկինը, չկարողանալով մերժել մուրացկանի խնդրանքը եւ նրան համբոյր տալով, ամօթահար նետում է վառուող թոնիրը: Թոնիրը ջրով է լցում, ջուրը դուրս է թափում եւ սկսում է ջրիեղեղը¹²⁵: Նոյի մասին պատումների շարքում համբոյրի մոտիւր փոխարինում է մէկ այլ արգելքի՝ չխօսկանութեան խախտմամբ, երբ հարսը Նոյին ասում է ջրի մօտենալու պատճառով թոնրի չվառուելու մասին¹²⁶: Եթէ երդիկը կապն էր վերեւի՝ երկնքի հետ, ապա թոնիրը ստորգետնեայ աշխարհի կապն է, հետեաբար թոնրատունն էլ միջին աշխարհն է:

Քաղաքը, տաճար-պալատը, տունը նոյնանում են տիեզերական ծառի, տուեալ դէպքում ծառ խնկենու գաղափարով: Ծառ խնկենին ստորին եւ միջին աշխարհները կապող եւ դէպի Աստծոյ դուռը՝ վերին աշխարհը, կամուրջն է¹²⁷: Այն տիեզերական ծառ-տիեզերքի առանցքն է, սիւնը, որի վրայ պէտք է պահուի տիեզերքի անխախտ կառոյցը, պետականութիւնը, տոմարը, այսինքն քաղաքը՝ հնազոյն քաղաք-պետութիւնը¹²⁸:

Տիեզերակառոյցը ստեղծուել եւ ձեւաւորուել է Աստծոյ հրամանով եւ Աստծոյ շուրջ: Այն ունի սկիզբ, մէջտեղ եւ վախճան՝ ամփոփուելով պտոյտի մէջ: Համաձայն ժողովրդական առասպելի, աշխարհի վերջը կապուած է Փոքր Մհերի ազատուելով, աշխարհ դուրս գալու ժամանակ: Նա բանտարկուած է Ջըմփ-զըմփ լեռնագագաթի անձաւի մէջ. «Ջըմփ-զըմփ մաղարայի լեռնագագաթը բերդածեւ է, այնտեղից բազմաթիւ իրեր են գրնում, հողակոյրերու փակ բացում են շէնքեր: Մհերի դուռը ամենալերջ քար է, զոր փաշեր եւ կոկեր են մեծ դրան ձեւով եւ վրան բեւեռագրեր գրած են, խիստ յստակ: Մհերի դրան վերէն սեւ ջուր մը կայթ կայթ կը ծորի: Մհերն ու իւր ծին Ասրծոյ հրամանով փակուեր են այն տեղը: Ճահրի Ֆալակ կը դառնայ, Մհերը շարունակ անոր վրայ կը նայի, երբ այդ ճահրը դադարի, այն օր Մհեր դուրս կ'ելլէ ու աշխարհը կ'արիւն»¹²⁹:

Ժամանակի մէջ գոյացած ու կազմակերպուած աշխարհը ժամանակի ընթացքում՝ համապատասխան պարբերաշրջաններից յետոյ, ենթարկուելու է կործանման: Աշխարհի կործանումը սկսուելու է ժամանակի վախճանով՝

Ճախրի Ֆալաքի պտոյտի դադարումով: Այս աւանդութեան մէջ առկայ է ժամանակի նախասկզբնական եւ վերջնական ընկալումը՝ ժամանակի սկիզբ (որ զրոյցում ենթադրում է) եւ վախճան¹⁰: Նման մի վերջ էլ աւանդուած է Արտաւազդի առասպելական պարբերաշրջանում, ինչպէս եւ Քրիստոսի վերջին գալստեան ժամանակ: Իրական ժամանակը վերջանալու է, եւ լինելու է միայն յաւերժութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Յատուկ շնորհակալութիւն եմ յայտնում դոկտոր Թամար Հայրապետեանին եւ պ.գ.թ. Լիլիթ Սիմոնեանին օժանդակութեան, քննարկման եւ խորհուրդների համար:
- ² Mircha Eliade, *Kosmos I Istoria*, (Կոսմոսն ու պատմութիւնը), Մոսկուա, Պրոգրէս Հրատ., 1987:
- ³ Valeriy Evsyukov, *Mifi O Mirozdanii* (Առասպելներ աշխարհաստեղծման մասին), Մոսկուա, *Politicheskoy Literaturi* Հրատ., 1986:
- ⁴ Vladimir Toporov, *Mirovoe Drevno. Universalnie Znakovie Kompleksi*, V 2 tomakh, (Տիեզերական ծառ. նշանային համընդհանուր համակարգեր, 2 հատորով), Մոսկուա, Ռուսիայի ծեռագիր հուշարձանները *Rukopisnie Pamyatniki Drevney Rusi* Հրատ., 2010:
- ⁵ Ասատուր Մնացականեան, *Հայկական Զարդարութեւր*, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ Հրատ., 1955:
- ⁶ Սարգիս Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, Պէյրութ, Տպ. Համազգային, 2000:
- ⁷ Համլէտ Պետրոսեան, *Խաչքար. Ծագումը, Գործառոյթը, Պարկերագրութիւնը, Բմաստաբանութիւնը*, Երեւան, Փրինթինգթոն, 2008:
- ⁸ Թամարա Հայրապետեան, «Խորհրդանշային Ցուցիչները Հայ Ժողովրդական Հեքիաթներում եւ Վիպապատմական Բանահիւտութեան Մէջ» (Պոկտորական ատենախօսութեան ծեռագիր, էջ 162-236): Այս աղբիւրը տրամադրելու համար շնորհակալութիւն եմ յայտնում հեղինակին:
- ⁹ Լիլիթ Սիմոնեան, *Տոմարային Ծիսաշար*, Հտր. 1. *Տոմար, Նոր Տարի, Սուրբ Ծնունդ*, Երեւան, ՎՄԿ-պրինտ, 2006. Նաեւ՝ Լ. Սիմոնեան, *Հալքն Իր Թեւով, Օձն Իր Պորպով*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2011:
- ¹⁰ Karl Gustav Yung, *Filosofskoe Drevno*, (Փիլիսոփայական ծառ), Մոսկուա, *Akademicheskoy Proekt* Հրատ., 2008:
- ¹¹ Երուանդ Լալայեան, «Վարանդա, Հաւատը», *Ազգագրական Հանդէս Գիրք Բ.*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1897. Նաեւ՝ Լալայեան, «Բորչալովի Գաւառ», *Ազգագրական Հանդէս Գիրք X*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1903. Նաեւ՝ Լալայեան, «Նոր Բայազէտի Գաւառ, Հաւատը», *Ազգագրական Հանդէս Գիրք XVII*, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց 1908:

- ¹² Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. I, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1959, ՀԺՀ, Հրր. II, 1959, ՀԺՀ, Հրր. VII, 1979, ՀԺՀ, Հրր. VIII, 1976, ՀԺՀ, Հրր. IX, 1968, ՀԺՀ, Հրր. XI, 1980, ՀԺՀ, Հրր. XII, 1984, ՀԺՀ, Հրր. XIII, 1985:
- ¹³ Սարգիս Յարութիւնեան, Հայ ժողովրդական Հանելուկներ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1965:
- ¹⁴ Սիմոնեան, *Տոմարային*, յաւելում:
- ¹⁵ Aleksey Losev, *Znak, Simvol, Mif, Moskva*, (Նշան, խորհրդանշան, առասպել), Մոսկուա, *Moskovskogo Universiteta* Հրատ., 1982, էջ 226:
- ¹⁶ Losev, էջ 224-226:
- ¹⁷ Eliade, էջ 150:
- ¹⁸ Նոյն, էջ 155:
- ¹⁹ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Karl Gustav Yung, *Libido, Ego Metamorfozi I Simvoli*, (Լիբիդոն, իր փոխակերպումներն ու խորհրդանշանները), Սանկտ Պետերբուրգ, *Vostochno-Evropeyskiy Institut Psikhoanaliza* Հրատ., 1994, էջ 213-265. Նաեւ՝ Սիմոնեան, *Տոմարային*, էջ 125:
- ²⁰ Eliade, էջ 156-157:
- ²¹ Նոյն, էջ 145:
- ²² Վ. Տոպորովը աշխարհակառոյցի փոխարէն յաճախ կիրառում է տիեզերական ծառ կերպարը, ինչը, կարծում եմ, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ աշխարհակառոյցի ոչ միայն ծառի կերպարով է դրսեւորում: Տոպորովն ինքն է բազմաթիւ այլ կերպարներ նշում որպէս աշխարհի մոդէլ:
- ²³ Vladimir Toporov, *K Proiskhozhdeniyu Nekotorikh Poeticheskikh Simvolov (Paleoliticheskaya Epokha)* (Քանաստեղծական որոշ խորհրդանշանների առաջացման մասին (հինքարէդարեան ժամանակաշրջան), *Rannie Formi Iskusstva*, (Արուեստի վաղ ձեւերը), Մոսկուա, *Iskusstvo* Հրատ., 1972, էջ 93:
- ²⁴ Նոյն:
- ²⁵ Boris Frolov, "Nachala Pervobitnoy Simvoliki (Po Materialam Izucheniya Drevneyshikh Kultur Armenii I Sopredelnikh Territoriy)" (Նախնադարեան խորհրդաբանութեան սկիզբը (Հայաստանի եւ յարակից տարածքների հնագոյն մշակոյթի ուսումնասիրութիւնների նիւթերի հիման վրայ)", *Պարմարանասիրական Հանդէս*, 1984, 1, էջ 65:
- ²⁶ Նոյն:
- ²⁷ Frolov, էջ 61. Նաեւ՝ Մնացականեան, էջ 61:
- ²⁸ Յարութիւնեան, էջ 21:
- ²⁹ Frolov, էջ 58:
- ³⁰ Այստեղ Կողբացին ազդուած է միլիթեան դպրոցի Ք.ա. 2. դարի հեղինակ Մնացիմանդրոսի ուսմունքից (F. Kessidi, *Ot Mifa K Logosu*, (Առասպելից դէպի բան), Մոսկուա, *Misl* Հրատ., 1972, էջ 126:
- ³¹ Եզնիկ Կողբացի, *Եղծ Աղանդոց*, Երեւան, Հայաստան Հրատ., 1970, էջ 36-37: Հմմտ.՝ չինական աշխարհակառոյցի հետ, երբ աշխարհի կողմերի պահապան ոգիները պատկերում կամ քանդակում են անկիւններում,

վերելում. աջից՝ Կանաչ վիշապ-արեւելք, ծախից՝ Սպիտակ վագր-արեւմուտք, ներքելում. աջից՝ Կարմիր թռչուն-հարաւ եւ ծախից՝ Սեւ գինուոր-հիւսիս, որը պատկերում է որպէս կրիային փաթաթումած օձ, խորհրդանշում է Երկնքի ու Երկրի ամանութիւնը (Yuan Ke, *Mifi Drevnego Kitaya*, (Հին Չինաստանի առասպելները), Մոսկուա, Glavnaya Redaktsiya Vostochnoy Literaturi (Արեւելեան գրականութեան գլխաւոր խմբագրութիւն), 1987, էջ 90-91, 375-376:

³² Կողքացի, էջ 35:

³³ Evsyukov, էջ 20-21:

³⁴ Եթէ այդ կէտերին գումարենք մէկը՝ հենց առանցքը, կը ստացուի ութ, վեց կամ տասը, եւ այս կէտերը կողմնացոյց են յիշեցնում, երկնքի ու երկրի հատուածների գաղափարը, երբ աւելի ամբողջական ներկայացնելու համար արտայայտում են ոչ միայն աշխարհի կողմերը, այլեւ անցումները. հիւսիս-արեւելք, հարաւ-արեւելք, հիւսիս-արեւմուտք, հարաւ-արեւմուտք, այսինքն ութի շուրջ, իսկ եթէ աւելացնենք զենիթն ու նադիրը, կը ստանանք նաեւ տասը:

³⁵ Evsyukov, էջ 23:

³⁶ Toporov, էջ 94-95:

³⁷ Frolov, էջ 58:

³⁸ Վահագնի ծագումն ու գործառոյթները չեն մտնում սոյն աշխատանքի թեմայի մէջ: Վահագնը դիտարկում է որպէս կրակ՝ ելնելով հիմնարար չորս տարրերի սկզբունքից. երգում առկայ են երկինք-օդը, երկիր-հողը, ծով-ջուրը, ուստի Վահագնը քաջակալող լոյս-կրակն է (իմմտ.)՝ Լիլիթ Սիմոնեան, «Վահագն Դիցոյթը Որպէս Կրակ Տարերքի Տիրակալ», *Բազմավէպ*, ԾԿԹ տարի, թիւ 3-4, Վենետիկ, Ս. Ղազար, 2011, էջ 646-678:

³⁹ Հմմտ.՝ Կողքացի, էջ 35:

⁴⁰ Aleksandr Demirkhanyan, "K Probleme Simvoliki Trekhchastnikh Kompozitsiy Drevney Armenii" (Հին Հայաստանի եռամաս կոմպոզիցիաների խորհրդաբանութեան խնդիրների մասին), *Պարմարանասիրական Հանդէս*, 1982, 4, էջ 157:

⁴¹ Երկնքի եւ երկրի եօթ գօտիների բաժանման մանրամասն վերլուծութիւնը տե՛ս՝ Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւնը*, էջ 10-12:

⁴² Գրիգոր Քինյ. Նժդեհեան, «Պառաւաշունչ», *Ազգագրական Հանդէս*, Գիրք IX, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1902, էջ 263-271:

⁴³ Երուանդ Լալաեան «Նոր-Քայազետի», էջ 94:

⁴⁴ Նոյն, էջ 91-93:

⁴⁵ Երուանդ Լալայեան, «Վարանդա», էջ 221:

⁴⁶ Երուանդ Լալայեան, «Բորչալուի Գաւառ», *Ազգագրական Հանդէս*, Գիրք X, Թիֆլիս, Տպ. Մ. Ռոտինեանց, 1903, էջ 198:

⁴⁷ Սոյն աշխատանքի սահմաններում՝ աշխարհակառոյցի եւ տիեզերական ծաղի վերաբերեալ որոշ հեքիաթների մեկնաբանութիւնը տե՛ս՝ Թամարա Հայրապետեան, «Տոմարական եւ Աստղաբաշխական Պատկերացումները

Հայ ժողովրդական Հեքիաթներում», *Պարմարանասիրական Հանդես*, 2007, թիվ 2, էջ 257-272:

⁴⁸ «Անմահական հսնծոր», *Հայ ժողովրդական, Հրր. II*, էջ 23-38:

⁴⁹ Նման հեքիաթների շարքում տե՛ս՝ «Լուս Ու Մութ Աշխարհ» (Տարոն), *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. XIII*, Երեւան, 1985, էջ 9-13 (այս հեքիաթում հետաքրքիրն այն է, որ արծիւը բոյնը սարքել է տիեզերական ծառի տակ), «Սինամահաւք» (Ալաշկերտ), *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. IX*, 1968, էջ 13-34, «Լուս Նան Մթէն Աշխարհնէն» (Արցախ), *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. VII*, 1979, էջ 11-15, «Ոսկէ Խանձուրուն Նաղըլը» (Մեղրի), Նոյն, էջ 585-597 եւն.: Այս հեքիաթներում տարբերում են թոշունների անունները՝ Զմրութ Ղուշ, Սինամահաւք, Արծիւ. տարբեր են աշխարհներն խորիդանշող գունաւոր կենդանիները՝ խոյ, ոչխար, ձի, այժ եւ տարբեր են մօի ու գինու քանակը, որ պահանջում են ամէնօրեայ ճանապարհի համար՝ եօթ կամ քառասուն, մնացածը Նոյնն է:

⁵⁰ «Կարմիր Եզն Ու Հ'ուշապ», *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. XII*, Երեւան, 1984, էջ 524-539. Նաեւ՝ «Բոր Եզ», *Հայ ժողովրդական, Հրր. XIII*, էջ 161-177 եւն.:

⁵¹ Կարմիր եզան կամ կովի եղջիրների վրայ գտնուող աշխարհի մասին տե՛ս՝ տոյն աշխատանքի սկզբում:

⁵² Սիմոնեան, *Հաքն Իր Թեւով*, էջ 77:

⁵³ «Զուկ Տղան», *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. I*, Երեւան, 1959, էջ 407-414:

⁵⁴ Նոյնը, էջ 407-414:

⁵⁵ *Մոքոս, ժողովրդական Վէպ*, գրի առաւ Սարգիս Հայկունի, էջմիածին, Մայր Աթոռ, 1896, էջ 37-38:

⁵⁶ *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. XVI*, Երեւան, 2009, էջ 362-363:

⁵⁷ Թ. Հայրապետեան, «Ծիսաառասպելական Տարրերը Ղարաբաղում Կենցաղավարող Հրաշապատում Հեքիաթներում Ըստ 2006-2008 թթ. Գրառած Նիւթերի», *Կրթութիւնը եւ Գիտութիւնը Արցախում*, Երեւան-Ստեփանակերտ, 2008, էջ 35:

⁵⁸ Անդ:

⁵⁹ «Ծովինարը», *Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հրր. VIII*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Իրատ., 1976, էջ 444-446:

⁶⁰ Նոյն, էջ 448:

⁶¹ Հմմտ.՝ չինականի հետ. սպիտակ-արեւմուտք, սեւ-հիւսիս, կանաչ-արեւելք, կարմիր-հարաւ (Yuan Ke, էջ 375): Գունային լուծումներ ունի նաեւ Ֆրիկի «Կամիմ ընդ ձեզ բան մի խօսել» սկզբնատողով պոէմում նկարագրուող աշխարհն ու տիեզերական ծառը. դեղին, կարմիր, կապոյտ եւ կանաչ (Յարութեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 21-22, տողատակը): *Էֆիմերտէ* գրքում, ի թիւս այլ երեսյթների, աշխարհի չորս կողմերը կապոււմ են գոյների հետ. սեւ-հիւսիս, սպիտակ-արեւելք, կարմիր-հարաւ, դեղին-արեւմուտք (*Էֆիմերտէ*, Երեւան, «Ապոլոն», 1992, էջ 147-148):

- ⁶² «Արա Գեղեցիկ», Ազգագրական Հանդես, Գիրք IX, 144-159:
- ⁶³ Նոյն, էջ 157:
- ⁶⁴ Նոյն, էջ 146-149:
- ⁶⁵ Նոյն, էջ 153-154:
- ⁶⁶ Յարութինեան, էջ 17:
- ⁶⁷ Նոյն, էջ 438:
- ⁶⁸ Գարեգին Սրուանծտեանց, *Երկեր*, 2 Հատորով, Հտոր. 1, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 150-151:
- ⁶⁹ Նման ապարանջաններ՝ երկու ծայրերին օձի երկու գլուխ, կամ պոչը գրեթէ կձող օձ լայնօրէն տարածուած են Հայկական Լեռնաշխարհում, քրոնզէ դարից մինչեւ ուշ միջնադար, նաեւ եպիսկոպոսական գաւազանի վրայ:
- ⁷⁰ «Աղքատ Յովանէս», *Հայ Ժողովրդական*, Հտոր. XII, էջ 41-42:
- ⁷¹ «Օծունէի Շառ», *Հայ Ժողովրդական Հեքիաթներ*, Հտոր. XI, էջ 292-294:
- ⁷² Սիմոնեան, *Հափն*, էջ 64-65:
- ⁷³ Մնացականեան, էջ 440:
- ⁷⁴ Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան*, Հտոր. Բ., Երեւան, ԵՊՀ Հրատ., 1973, էջ 62-63, երկին եւ երկիր բառերի տակ. նաեւ՝ *էֆիմերութեան*, էջ 165:
- ⁷⁵ Պատկերագրական օրինակներ տե՛ս՝ Մնացականեան, էջ 102, նկ. 270, 271:
- ⁷⁶ Մնացականեան, էջ 101-102:
- ⁷⁷ Անդ:
- ⁷⁸ «Տաղ Յարութեան Գրիգորի Նարեկացոյն Ասացեալ», Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ Գանձեր*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1981, էջ 59-65:
- ⁷⁹ Մովսէս Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1997, էջ 87:
- ⁸⁰ Նոյն, էջ 88:
- ⁸¹ Նոյն, էջ 105-106:
- ⁸² Նոյն, էջ 112:
- ⁸³ Նոյն, էջ 109-110:
- ⁸⁴ Նոյն, էջ 167:
- ⁸⁵ Նոյն, էջ 173-174:
- ⁸⁶ Նոյն, էջ 174:
- ⁸⁷ Այս երկիրը կոչում էր Կուեռա ուրարտական վիշապ աստուածութեան անունով (Ս. Գ. Հմայակեան, *Վանի Թագատրութեան Պետական Կրօնը*, Երեւան, 1990, էջ 51:
- ⁸⁸ Նոյն, էջ 53-54:
- ⁸⁹ Գրիգոր Ա. Յակոբեան, *Ներքին Բասէնի Ազգագրութիւնը եւ Բանահիստութիւնը*, Երեւան, Հայաստան Հրատ., 1974, էջ 251, 252:
- ⁹⁰ Արամ Ղանալանեան, *Աանդապարտում*, Երեւան, Հայաստանի ԳԱ Հրատ., 1969, թիւ 11:
- ⁹¹ Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն Արծրունեաց Տան*, Երեւան, Հայաստան Հրատ., 1999, էջ 36:

- ⁹² Անուշաւան Եպս. Ժամկոչեան, *Ասորւածաշունչը Եւ Հայ Բանատը Աանդոյթը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2012, էջ 68:
- ⁹³ Ղանալանեան, թիւ 258 եւ 293:
- ⁹⁴ Eliade, էջ 154:
- ⁹⁵ Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, Սովետական Գրող, 1977, էջ 117:
- ⁹⁶ Ղանալանեան, թիւ 602:
- ⁹⁷ «Երկինք Գնացող Տղէն», *Հայ Ժողովրդական, Հրր. VIII*, էջ 202-203: Հմմտ.՝ շամանական ծաղի հետ, որով բարձրանում են Բայ Ուզէնի պալատը (Eliade, էջ 155):
- ⁹⁸ Ղանալանեան, էջ 350-351. Նաեւ՝ Ժամկոչեան, թիւ 28, 29, 146, 148, 149:
- ⁹⁹ Կարապետ Գաբիկեան, *Բաղդիրը Սեբաստիայի Գաւառաւեզուի*, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1952, էջ 449-50: Հմմտ.՝ ծառով դէպի Ծիր Կաթին կամ Երկինք բարձրանալը այլ ժողովուրդների մօտ (Eliade, էջ 156-157):
- ¹⁰⁰ Ժամկոչեան, էջ 303:
- ¹⁰¹ Նոյն, էջ 304:
- ¹⁰² Նոյն, էջ 104:
- ¹⁰³ Ժամկոչեան, էջ 105:
- ¹⁰⁴ Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական Հանելուկներ*, թիւ 12, 12բ, 13, 75 եւն.:
- ¹⁰⁵ Յարութիւնեան, էջ 19:
- ¹⁰⁶ Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական Հանելուկներ*, թիւ 140բ, 140գ, 141բ, 148:
- ¹⁰⁷ Յարութիւնեան, էջ 20:
- ¹⁰⁸ Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական Հանելուկներ*, թիւ 1010ա, 1010ը եւն.:
- ¹⁰⁹ Յարութիւնեան, էջ 21:
- ¹¹⁰ Լեւոն Խաչիկեան, «Նախամեսրոպեան Գրի Հարցը Եւ Հմայագրերը», *Աշխարհութիւններ*, Հրր. Ա., Երեւան, «Գանձասար» 1995: Գրքում տպագրուած է ԴՃԿԵ, բայց Դ չորս է, Գն է երեքը, ըստ ամենայնի գրքում տպագրական սխալ է տեղ գտել:
- ¹¹¹ Նոյնը, էջ 20-21:
- ¹¹² Յարութիւնեան, էջ 21-22:
- ¹¹³ Նոյն, էջ 23:
- ¹¹⁴ Գարեգին Սարկ. Յովսէփեանց, *Փշրանքներ Ժողովրդական Բանասիրութիւնից*, Թիֆլիս, Տպ. Մ. Շարածէի, 1892, էջ 22:
- ¹¹⁵ Մնացականեան, էջ 104-105: Հեղինակի կարծիքով, թէւ այս տաղում առկայ են քրիստոնէական խորհրդանշաններ ու գաղափարներ, այն պէտք է որ շատ անելի հին լինի:
- ¹¹⁶ Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 27:
- ¹¹⁷ Սիմոնեան, *Տոմարային*, էջ 122:
- ¹¹⁸ Նոյն, էջ 119:
- ¹¹⁹ Նոյն, թիւ 22, 23, 25, 26, 27, 30, 35, 57 եւն. Աւետիսներ:
- ¹²⁰ Նոյն, էջ 125-126, 266:

- ¹²¹ Հմմտ.՝ վիշապ-կրթողների միա անուանման հետ՝ օհուզ (թրք. եզ),
Մնացականեան, էջ 547:
- ¹²² Նոյն, էջ 131, տողատակը:
- ¹²³ Նոյն, էջ 100:
- ¹²⁴ Նման առասպելների վերաբերեալ տե՛ս՝ Ղանալանեան, թիւ 289, 269, 252
եւն. նաեւ՝ Ժամկոչեան, էջ 69:
- ¹²⁵ Նոյի եւ ջրհեղեղի հայոց առասպելաբանութեան տեղական առանձնա-
յատկութիւնների մանրամասն վերլուծութիւնը տե՛ս՝ Ժամկոչեան, էջ 66-72:
- ¹²⁶ Ժամկոչեան, թիւ 33, 38 եւն.:
- ¹²⁷ Սիմոնեան, *Տոմարային*, էջ 126:
- ¹²⁸ Նոյն, էջ 122-123:
- ¹²⁹ Սրուանձտեանց, *Հտ. 1*, էջ 88:
- ¹³⁰ Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, էջ 445-446:

THE WORLD MODEL IN ARMENIAN FOLKLORE (SUMMARY)

KAREN HOVHANNISIAN
karenhovhov@mail.ru

As Armenian civilization is a part of the Mediterranean cultural space the author briefly explains the Mediteranean perception of the world model. He defines "the world, or the universe model" as a system of cultural time and space structured around the universal axis in which a society lives.

Human society has for ages made its territory cultural, separated it from nature, but it is still in relationship with nature. The zone of human habitat was comprehended as cosmos, in contrast to chaos, the space outside culture. In many cases areas of water (seas, lakes, rivers) were considered zones of chaos, probably because people could not live there. The sky was always the abode of deities, time was calculated with the help of the sky, the sun, the moon, stars, and planets, while heavenly bodies were the main topic of myths on the origins and structure of the universe. Finally, the general configuration of the universe, according to the archetypal dichotomy, is the constant connection of heaven and earth. Trees, mountains, temples, the palace, the city, the house etc. were perceived as images of the world structure, while its layers were symbolically represented by animals, colours, and basic elements.

The Armenian perception of world structure is a dynamic system placed in time and space. In Armenian folklore the vertical and the horizontal axes of the universe are represented in connection with iconic and traditional architectural forms. The world model is expressed as a tree (incense-tree, or juniper), column (staff as symbolic column), mountain (Masis), temple (Solomon's temple) etc. *Tonratun* (bakery, kitchen) on the other hand, represents the microcosm. The flood starts when *tonir* (traditional oven) is filled with water and, thus, chaos invades cosmos.